



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵ ԷՆՍԻՆՈՅԻ Ս.
ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԷՆ ՏԱՐՕՆ ԱՐԵՏԻՍԵԱՆԻ**

Կիրակի, 7 Փետրուար 2010-ին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր.



S. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը:

Յընթացս Ս. Պատարագի, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան երիտասարդ անդամներէն՝ հանգուցեալ Տարօն Աւետիսեանի հոգւոյն համար: Ան երկու ամիս առաջ իր մահկանացուն կնքեց Հալէպի մէջ, խոր սուգի մատնելով համայն հալէպահայութիւնը եւ հարազատները:

Տարօն Աւետիսեան նաեւ մեծ ներդրում եւ վաստակ բերած է Բերիոյ Թեմի Ազգային եւ եկեղեցական կառոյցներէն ներս:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT HOLY
MARTYRS CHURCH AND REQUIEM SERVICE FOR
DARON AVEDISSIAN**

On Sunday, February 7th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy and deliver the sermon at Holy Martyrs Church in Encino.

At the conclusion of Divine Liturgy, the Prelate will preside over requiem service for Catholicosate Central Executive member Daron Avedissian, who passed away two months ago. The late Mr. D. Avedissian was greatly involved

in the church and community, serving the Aleppo Diocese and the Armenian Church for decades in various capacities.

Ս. ՂԵՆՈՆՂԵԱՆՑ ԵՒ ՎԱՐՂԱՆԱՆՑ ՏՕՆԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ

**ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԵՒ ՅԱՏՈՎ
ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐԵՄՏԵԱՆ ՄԵՐ ԹԵՄԻՆ ՄԷՋ**

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին Փետրուարի երկրորդ շաբթուան ընթացքին, 9ԷՆ 11 Փետրուարին, պիտի նշէ մեր եկեղեցական ու ազգային պատմութեան ամենէն նուիրական ու յիշատակելի տօներէն՝ Ս. Ղեւոնդեանց Զահանայից եւ Ս. Վարդանանց Չօրավարաց տօները:

Համաձայն մեր Թեմի աւանդութեանց, այս տօներուն առիթով տեղի պիտի ունենան Հոգեւորականաց Համագումար, ինչպէս նաեւ յատուկ արարողութիւններ:

Նկատի ունենալով, որ Ս. Ղեւոնդեանց տօնը տօնն է նաեւ Հայ Զահանային, Հոգեւորականաց Համագումարը յատկացուած է այս տօնին: Երեքշաբթի, 9 Փետրուարի առաւօտէն սկսեալ, Ազգային Առաջնորդարանին մէջ տեղի պիտի ունենայ միօրեայ համագումար, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ հիւրընկալութեամբ Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ: Համագումարը պիտի սկսի առաւօտեան աղօթքի պահով մը, Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան մէջ: Ապա, իրերայաջորդ նիստերով, տեղի պիտի ունենան դասախօսական հանդիպումներ, Ս. Գրային սերտողութեան ու fog;uor խորհրդածութեան պահեր:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 7ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ Ս. Պատարագ: Պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հոգշ. Տ. Վաղինակ Վրդ. Մելոյեան:

Ս. ՎԱՐՂԱՆԱՆՑ ՏՕՆԸ

Ս. Վարդանանց Չօրավարաց տօնը Հինգշաբթի, 11 Փետրուարին է:

Այս առիթով, Չորեքշաբթի, 10 Փետրուարի երեկոյեան ժամը 7ին, նախատօնակի արարողութիւն պիտի կատարուի Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազանին եւ մասնակցութեամբ Թեմիս հոգեւորականաց Դասուն: Իսկ Հինգշաբթի, 11 Փետրուարի առաւօտեան ժամը 10:30ին, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի պիտի ունենայ Ս. Պատարագ: Թէ՛ նախատօնակի արարողութեան եւ թէ՛ Ս. Պատարագի աւարտին, պիտի երգուին Ս. Վարդանանց տօնին յատուկ շարականներ եւ ազգային երգեր:

Կը հրաւիրենք մեր բարեպաշտ ժողովուրդը ներկայ ըլլալու այս արարողութեանց, վերանորոգուելու Ս. Ղեւոնդեանց ու Ս. Վարդանանց

պատգամով ու վերահաստատելու անկէ թխող ուղիին հաւատարմութեան ուխտը:

CLERGY CONFERENCE AND SPECIAL SERVICES ON THE FEASTS OF STS. GHEVONTIANK AND STS. VARTANANK

Each year on the Feast of Sts. Ghevontiank, Prelacy clergy members gather for a one-day conference and Divine Liturgy, under the auspices and presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate.

This year's conference is being hosted by St. Garabed Church and will take place on Tuesday, February 9th, 2010, at the Prelacy. The day will begin with morning services at the Prelacy Chapel, followed by the conference which will include lectures and spiritual meditations.

In the evening, clergy and faithful will gather at St. Mary's Church in Glendale for Divine Liturgy, which will be celebrated by pastor of St. Gregory Church in San Francisco Very Rev. Fr. Vaghinag Meloian. The service will begin at 7:00 p.m.

Thursday, February 11th, is the Feast of Sts. Vartanank. On the evening of Wednesday, February 10th, the Prelate will preside over eve of the feast services at St. Sarkis Church in Pasadena, starting at 7:00 p.m. The clergy order will participate in the service.

On Thursday, Vartanants, Divine Liturgy will be celebrated in all Prelacy churches starting at 10:30 a.m.

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՆԱԽԱՏՈՆԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՒԱՆԴԱԿԱՆ ԽԱՐՈՅԿ

Մեր եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի 40օրեայ տաճար ընծայման տօնը՝ Տեառնընդառաջը կը նշուի 14 Փետրուարին:

Ինչպէս նախընթաց տարիներուն, այս տարի եւս, Տեառնընդառաջի տօնը պիտի նշուի նախատօնակի արարողութեամբ ու աւանդական խարոյկով:

Շաբաթ, 13 Փետրուարի երեկոյեան, ժամը 6ին, Տեառնընդառաջի նախատօնակին առիթով, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի պիտի ունենայ նախատօնակի արարողութիւն, որուն ընթացքին, պիտի կատարուի մանուկներու Ս. Սեղանին ընծայման արարողութիւնը:

Արարողութենէն ետք, եկեղեցւոյ շրջափակին մէջ տեղի պիտի ունենայ խարոյկի հրավառման աւանդական արարողութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒՆ ԵՒ ՀԱԵՄ-Ի ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Մեր Թեմի գեղեցիկ աւանդութիւններէն է այն, որ Տեառնընդառաջի արարողութիւններէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի սկաւտներու խմբապետներն ու ներկայացուցիչներ ընթրիքի շուրջ սեղանակից ըլլան Առաջնորդ Սրբազանին ու ներկայացուցչական այլ անձնաւորութիւններու: Ընթրիքի հանդիպումը տեղի պիտի ունենայ Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ: Մասնակից պիտի ըլլան նաեւ մեր եկեղեցիներու երիտասարդական միութեանց անդամներ:

EVENING SERVICE AND TRADITIONAL BONFIRE ON THE EVE OF THE PRESENTATION OF OUR LORD TO THE TEMPLE

On Sunday, February 14th, 2010, the Armenian Church will celebrate the Presentation of our Lord to the Temple and the Eve of Great Lent. Each year on the eve of the Feast, evening services take place in Prelacy Churches followed by the lighting of the traditional bonfire.

On Saturday, February 13th, at 6:00 p.m., H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over services at St. Mary's Church in Glendale.

In keeping with tradition, Homenetmen scouts and representatives, as well as members of the Armenian Church Youth Association, will be in attendance and will be hosted to dinner with the Prelate at "Armenak Der Bedrossian" Hall at the conclusion of the services.

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԽՐԱԽՃԱՆՔ

Կիրակի, 14 Փետրուարին, կ.ե. ժամը 1:30-ին, Բուն Բարեկենդանի տօնին առիթով, ընտանեկան խրախճանք մը տեղի պիտի ունենայ Կլենտէյլի «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ:

Ձեռնարկը կը վայելէ Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը եւ նախաձեռնութիւնն է Ազգային Առաջնորդարանի Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Սարմիին եւ Ծնողական յանձնախումբին:

Պիտի իրագործուի գեղարուեստական ճոխ յայտագիր, պիտի հրամցուին համադամ ճաշեր:

Սուտքի նուերն է, մեծերուն՝ \$20, 12-էն վար փոքրերուն համար \$10:

Յաւելեալ տեղեկութեանց համար դիմել Ազգային Առաջնորդարան կամ Կիրակնօրեայ Դպրոցներու պատասխանատուներուն:

Բուն Բարեկենդանի տօնին յաջորդ օրը, Երկուշաբթի, 15 Փետրուարին, կը սկսի Ս. Յարութեան տօնը կանխող Մեծ Պահոց քառասնօրեայ շրջանը:

Մեծ Պահոց շրջանին, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի պիտի ունենան Արեւագալի եւ Հսկումի արարողութիւններ, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերուն:

CELEBRATING THE EVE OF GREAT LENT/PAREGENTAN

Sunday, February 14th, is the Eve of Great Lent, or Paregentan. The annual Paregentan celebration will take place under the auspices of the Prelate at 1:30 p.m. at the "Armenak Der Bedrossian" Hall of St. Mary's Church. The event is organized by the Sunday Schools' Directorate and PTO.

Tickets are \$20 for adults and \$10 for children 12 and under.

For more information contact the Prelacy office or your local Sunday School representative.

Monday, February 15th is the first day of Great Lent. During this 40-day period, Sunrise and Vesper Services will be offered in all Prelacy Churches on Wednesdays and Fridays.

Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՒՅՑ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԵՂԱՒ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԵՏ

Շաբաթ, 30 Յունուարը տօնն էր Ս. Սարգիս Զօրավարի եւ իր որդւոյն՝ Մարտիրոսի:




Կիրակի, 31 Յունուարին, Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առթիւ, Թեմիս բարեխամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ մատուցեց, օրուան խորհուրդը ներկայացնող իր պատգամը փոխանցեց եւ մատաղօրիները կատարեց Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ:

Ս. Խորանին սպասարկեց Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Խորեն Զինյ. Պապօշեան: Ներկայ եղան Ազգային Վարչութեան անդամներ՝ Տեարք Սիեր Տէր Յովաննեսեան եւ Ներսէս Մելքոնեան: Եկեղեցւոյ բարերարներ՝ Տէր եւ Տիկին Սարգիս եւ Սիւզան Կիսցիւնեան, եկեղեցւոյ երեսփոխանները, Հոգաբարձութեան եւ Տիկնանց Միութեան անդամներ եւ հաւատացեալներու հոծ բազմութիւն մը:

PRELATE CELEBRATES DIVINE LITURGY ON THE NAME DAY OF ST. SARKIS CHURCH IN PASADENA

Saturday, January 30th, was the Feast of St. Sarkis, which is also the name day of St. Sarkis Church in Pasadena.



On this occasion, on Sunday, January 31st, the Prelate celebrated Divine Liturgy, delivered the sermon, and conducted the blessing of *madagh* at St. Sarkis Church. Parish pastor Rev. Fr. Khoren Babochian assisted at the altar.

In attendance were Executive Council members Mr. Meher Der Ohanessian and Mr. Nerses Melkonian, church benefactors Mr. and Mrs. Sarkis and Suzan

Kitsinian, delegates, Board of Trustees and Ladies Auxiliary members, and a large number of faithful.

A reception followed at the church hall.
